

M. Archam Poste Restante
Athènes (Grèce)

ՏՄՐԵԿԱՆ . . . Ֆրանք 4

ՎԵՑՍՄՍԵՍՅ . . . « 2

ՄԻՈՒԹԻԻՆ

ՕՌԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ

Բաժնեգրի փոխարէն ամեն երկրէ կըն-
դունուի նամակադրոյմ (փուլ) :
Ամեն անոնք՝ որ բաժանորդ կը գրուին
և առաւարելն երեք ամիսէն չեն վճարեր
շորրորդ ամիսը թերթ չպիտի ստանան :

Ե. Տ Ա Ր Ի

Աթէնք

1900

Ն Ո Յ Ե Մ Բ Ե Ր

Թ Ի Ի 42

Յեղափոխական նշանաւոր գործիչ մը՝ արտա-
սահմանէն զրկած է մեզ հետեւեալ յօդուածը,
որը ամենայն սիրով կը հրատարակենք :

ՄԻՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԱՐԿԱԾ

ԽԱՌՆ ԺՈՂՈՎԸ ԵՒ ԱՊԱՆԱՅ

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ

«Միութիւն»ը իր անցեալ 1899ի նոյեմ-
բեր-Դեկտեմբերի թուով Տիար Մինաս Զե-
րազի նախագահութեամբ 1900ի Մայիսին
«Բարիդի մէջ Ազգային Ուսումնական Ժողով» մը
գումարել կ'առաջարկէր. որուն պէտք էր
մասնակցէին «մի քանի նշանաւոր չէզոք անձ-
նաւորութիւններ» և որ առանց «կուսակ-
ցութեանց անցեալ գործունէութիւններու
վրայ» վիճաբանելու, պիտի դբադէր «Ազ-
գային գործերը վարելու եղանակները որո-
շելու և Ազգին համակրութիւնը գրաւող վըս-
տահելի մարմին մը ընտրելու» խնդրով, այն-
պիսի որ այժմ ընտրուած մարմինը «եւրոպա-
կէն տէրութիւններէն պաշտօնապէս ճանչ-
ցուէր իբր հայութեան ընդհանուր ներկայա-
ցուցիչը» :

Զեմ կարծեր որ աշխարհիս ո' և է մէկ
անկիւնը գտնուի Հայ մը որ չի ծախահա-
րէ այս առաջարկը ու չի գնահատէ նպատա-
կը, ամեն հայ անհատ կարծեմ համոզուած
է այլևս թէ մեր մէջ եղած այս պառակտում-
ները, կուսակցական սնոտի, աննպատակ ու
անվերջանալի վէճերը և կուսա ցութիւնները
անհատական հաշուեյարդարութեան ապաս-
տան մը դարձնելը ազգին համար կորստա-
բեր եղած են և աղետալի հետեւանքներ ու-
նեցան ու պիտի ունենան ալ յաւիտ :

Մինչև 95-96 թուականը կուսակցու-
թիւնները բազմաթիւ տրդարանայի պատ-
ճառներ կրնային ունենալ իրենց գործունէ-
ութեանց համար, բայց անկէջ յետոյ՝ 5
տարիներէ ի վեր անոնց յամառելը ու չա-
րունակելը մի և ն ո յ ն ու զ զ ու թ ե ա ն
մ է ջ, ուրիշ բանի չառաջնորդեր մեզ, ե-
թէ ոչ Ազգը բնաջինջ ընելու, մանաւանդ
որ եւր նկատի առնենք թէ անցեալին ահ-
ռելի օրինակի մը ուրուականը ցըցուած է մեր
աչքին առջև. այլևս անբացարեւի կը զըտ-
նենք այդ յամառումը, եթէ չենք ուզեր ո-
ճրպարծներ անուանել ատոր պատճառ ե-
ղողները :

Առանց պատրանքներով ինքզինքնիս
խաբած ըլլալու կրնանք ըսել թէ՝ Ազգին մէ-
ջէն կարող, անկեղծ ու չէզոք հայրենա-
սէր անձնաւորութիւններէ և միեւնոյն ա-
տեն կուսա ցութեանց պատկանող անկող-
մընակալ և անձնուէր յեղափոխականներէ
չ'ամարում «Ուսումնական Ժողով» մը եթէ ոչ իր

անմիջական բարերար արդիւնքը, գէթ ա-
պագայ Հայ-Յեղափոխութեան համար կազ-
մուելիք բաղձացուած մարմնայ կազմութեան
նախաձեռնութիւնը եղած պիտի ըլլար :

Յայտնի չէ թէ ինչ էր պատճառը որ
չի կրցաւ տեղի ունենալ այդ «Ուսումն Ժո-
ղով» թէ և «Միութիւն»ը իր 40րդ թիւին
մէջ Հնչակեան վերակազմեալ մարմինի վերա-
գրեց տտիկայ, բայց ըստ մեզ այդ մարմի-
նը պէտք էր անկարող ճկատուէր ազգին
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՄԻՆ առջև, և հարկ է որ
տեղի ունենար առաջարկուած Ընդհանուր
Ժողովը. չէ որ արդէն «Միութեան ծրարէն
բոլորովին դուրս էր Կուսակցական Ժողով»
մը ընել այդ «Ուսումն Ժողովը», որուն «մաս
նակցելու իրաւունքը» պիտի ունենար «ա-
մեն հայ, ըլլայ կուսակցական, ըլլայ ոչ կու-
սակցական» :

Երբէք դժուարահասկնալի կամ խեղա-
թիւրելի բան մը չէր «Միութեան» առաջարկը :
Ու անգամ մը «Միութեան» կողմէ առաջարկի
ձեռով հրապարակ նետուէին յետոյ, պէտք
էր Ազգին կողմէ իբր «բաղձանք» մը բնորոշուէր
ու անոնք՝ որ յանձն առած էին այդ բաղձան-
քին իրականացումը, պարտական էին առաջ
տանիլ իրենց աշխատութիւնները նոյն ուղ-
ղութեան մէջ :

Դադտեք մը պէտք չէ ըլլայ այլևս մեզի
համար թէ մեր Յեղափոխական Կուսակցու-
թիւններու մէջ Միութիւն մը կամ Համերաշխ
գործունէութիւն մը հետզհետէ անկարելի ու-
թեան աստիճանին հասած է ու կը հասնի.
Թէ և միեւնոյն ատեն ալ ցաւալի է ըսել թէ
այդ մարմինները միշտ դէպի միեւնոյն նպա-
տակը կը ձգտին ու տակաւին չեն կրցած
մէջոտող բերել հիմնական զօրաւոր պատ-
ճառ մը ներկայ անհատ ոգին արդարացը-
նող, որ յաճախ պատճառ եղած է մոռցնել
հասարակաց թշնամին—Թուրքը—ու զբաղիլ
մէկզմէկով. այսուհանդէս պէտք էր որ հա-
մոզուած ըլլայինք թէ նոյն այդ թշնամին
մեզի դէմ մղած հալածանքին ու կոտորածին
մէջ բնաւ Հնչակեանի ու Դրօշակեանի խը-
տիր չի գներ—ու ո'չ միայն Հնչակեանի կամ
Դրօշակեանի—այլ և ոչ մէկ հայու միջև առ
հասարակ. թշնամին այժօր Հայ Յեղափո-
խութեան դէմ չէ միայն որ կը կուռի, այլ
ընդհանուր հայութեան դէմ :

Իրերու այս կացութեան մէջ ամեն հայ
անհատ, կամ ուրիշ բառով, Ազգը իր ամ-
բողջութեամբ պարտական է հետաքրքրուիլ
իր ազատագրման գործովն ինչպէս հէնդ տա-
րիներ առաջ մեր յեղափոխական Կուսակցու-
թիւնները կրնային ունենալ իրենց գործու-
նէութեանց արդարունալի պատճառները, նոյն
պէս ալ գուցէ ազգը իրեն անտարբերութեան
աւելի կամ նուազ արդարանալի պատճառ-

ները ունենար այդ թաւահանէն առաջ, բայց
աս միջոցիս բնաւ կարելի չէ արդարացնել
ո' և է հայու անտարբերութիւնը դէպի Հայ
Յեղափոխութիւնը, դէպի Ազգային Ազատա-
գրման Դործը : Որքան ալ ուզենք ամբաս-
տանել մեր յեղափոխական Կուսակցութիւն-
ները. իրենց անհամերաշխ գործունէութեան
և Կուսակցական կոյր ու մոլանդ ոգւոյն
համար, Հայ պատմութիւնը սակայն, արդար
հատուցում մը ունի անոնց ընելիք թէ մի-
այն ու միմիայն անոնք էին որ դբաւեցան,
կուուցան, ամեն տանջանքներու ենթարկուե-
ցան ու զոհուեցան Ազգին Ազատագրու-
թեան համար :

Արդարութեան այս պտրտքը խոստովա-
նելէ յետոյ չենք կրնար սակայն մեր դայ-
րոյթն ալ ծածկել Կուսակցութեանց այն
ազգակործան յամառութեան ու գոյանալիք
Միութեան կամ Համերաշխութեան մը դէմ
հանտճ զանազան աննպատակ ու անարդա-
բանալի խոչնդոտներուն դէմ, զորո կարելի
է երկուքի բամնել. Առաջինը միշտ անհո-
տական հաշիւներ ու անձնական կրքեր մի-
այն եղած նն. այս կամ այն Կուսակցու-
թեան պատկանող անհատներ—միւս Կուսակ-
ցութեան մէջ գանուող ուրիշ անհատներու
հետ անձնական ո' և է հաշիւներ ու խուլ
հակառակութիւններ ունենալով իրենց կրքե-
րը յագեցնելու միջոց մը ըրած են ու իբր
այն կը գործածեն Յեղափոխական Կուսակ-
ցութիւնները, և ալ կը ջանան մէկզմէկու
դէմ տնխաստովանելի ոճիրներ ու դաւեր սար-
քելու վերադրել, ընդհանրացնել այդ ոճի-
րները, գրգռել մտքերը մէկզմէկու դէմ : Այս-
պէսով մեր Յեղափոխական Կուսակցութիւն-
ները յաճախ մոռցած են հասարակաց թըշ-
նամին—Թուրքը—և մէկզմէկու դէմ զինուած :
Երկրորդը կարգ մը մակարոյժ անհատներու
Կուսակցութիւնները այլևս իրենց մէյմէկ խա-
նութեան դարձնելին եղած է. Թուրքիայէն
դուրս զանազան երկրներու մէյմէկ անկիւն-
ները նստած «հերոս գործիչներն» են ա-
սոնք, որոնք գիտեն թէ եթէ անգամ մը Հայ
Յեղափոխութիւնը միակ կանոնաւոր կազմա-
կերպութիւն մը ստանայ ու ազգային գօնգրող
մը հաստատուի այլևս իրենց պիտի դադրին
արտասահմանի մէջ զգործիչները : Ըլլալէ
ու յանուն Հայ Յեղափոխութեան հանգա-
նակուած զրամներով յղկանալէ, և այս ան-
խիղճ մակարոյժները ձեռք ձեռքի տուած ա-
ռաջիններս են հետ իրենց դիրքը անգայթ ու
անխախտ պահելու համար ամեն խաւարային
հնարքներ կը ստեղծեն, վստահ ըլլալով թէ
միամիտներու ջոկատ մը պիտի կրնան քաշ-
կռուել իրենց ետեւէն. ինչպէս տեսնուեցաւ որ
ասանկներէ ոմանք ալ ուղեջին Բալկանի դերեր
կատարել ու խայտառակ և լքուած մէջտեղ
մնացին :

Թող չի կարծուի ընալ թէ կարգ մը ան-
ձերու պէս հրապարակի վրայ բան մը լած,
կամ, այս կամ այն յեղափոխական կուսակ-
ցութիւնը քննադատած ըլլալու տւայական
անհշէն բառած կը գրենք այս տողերը. ընդ-
հակառակը խորին համոզում մը կը թելագրէ
մեզ և փափաքողներէն ալ ենք որ Յե-
ղափոխութեան վարկը միշտ բարոյական բար-
ձրութեան մը մէջ մնայ. առանց ուրանալու
անկեղծ ճշմարիտ ու համոզուած քննադա-
տութեան մը անհուն բարեքննութիւնը կը
նար ալ ծածկել մեր գարշաքը այդպիսինե-
րուն գէմ որոնք մերթ կոյր կրքերէ առաջնոր-
դուած ու յաճախ անգիտակից ու ողորմելի
մտքով մը անխիղճ զրպարտութիւններով, փո-
ղոցային բառերով ու հայհոյութիւններով, ե-
րեւակայական ու անգոյ «փաստերով» և ծի-
ծաղելի անտրամաբան ու տափակ քննադա-
տութիւններով թերթերու էջերը կը լեցնեն և
անտեղի ու ցաւալի դայթակցութիւններ յա-
ռաջ կը բերեն ժողովրդեան մէջ, բան մը որ
անհունապէս կը վնասէ յեղափոխութեան և
ա՛լ աւելի մտքերը կը լարէ ու կը ցրտացնէ
հասարակութիւնը փոխանակ փողոցային հրա-
տարակութիւններու. եթէ միշտ փորձառու-
թեան վրայ հիմնուած, անկեղծ ու անաչառ
քննադատութիւններ երևէին, թէ՛ աղզը աւե-
լի տարբեր կերպով կը վերաբերուէր դէպի
Յեղափոխութիւնը և թէ՛ կուսակցութիւնները
աւելի տարբեր հանգամանքներու և որոշ ուղ-
ղութեան մը մէջ կը գտնուէին, և ո՛վ գիտէ
թերևս մեր կուսած ու պաշտպանած դատն
ալ աւելի բարեբաղդ կերպարանք մը ստացած
կըլլար:

* * *

Ինչ որ ալ ըլլայ սակայն մեր յեղափոխա-
կան կուսակցութեանց այսօրուան դատապար-
տելի ընթացքը, սկսած է Ազգին մէջ հետզհե-
տէ հասարակաց կարծիք մը գոյանալ, մեր
յեղափոխական կուսակցութիւնները իրենց
պատմական դերերը աւարտելու վրայ են ու
միտնաբարակ երևոյթ մըն է հետզհետէ, թէ և
պզտիկ, բայց անկողմնակալ շրջանակներ այլ
ևս չեն ուղեր պարզ, անտարբեր հանդիսա-
տեսներ մնալ կուսակցութեանց բմահաճ ըն-
թացքին ու ազգին արիւնոտ աղէտներուն
հանդէպ, բաւական կարեւոր շրջանակներու
մէջ համոզումը արմատանալ սկսած է այլևս
թէ թշնամիին հետ մեր այս անհաւասար ար-
իւնալից կռուին մէջ մեր ուժերու բաժանումը
ազգը ամբողջովին բնաջինջ ընելէ զատ ուրիշ
տեղ չառաջնորդեր. անհամեմատ կերպով ու-
ժեղ թշնամիին դէմ բանակ մը երբ քանի մը
ստորաբաժանումներ կ'ունենայ իր մէջ ու չի
գործեր միեւնոյն ուղղութեան տակ այդ բա-
նակը իսկոյն բնաջինջ ըլլալու դատապար-
տուած կ'ըլլայ, եթէ Նաբոլէոնեան հանձարներ
իսկ ըլլան անոր հրամայողները: Վերջերս գա-
ւառներէն հասնող կոտորածի սրածաւիկի լու-
րերը անգամ մը ևս կ'ամրապնդեն այս համո-
զումը, որոնք ուրիշ բան չեն՝ եթէ ոչ կու-
սակցութեանց յամառութեան արդիւնքը:

Ինչպէս անհատական ու ընկերական
կեանքի մէջ ամեն բան, նայնպէս ալ մեր յե-
ղափոխական կուսակցութիւնները բարեշրջման
անխուսափելի օրէնքին ենթակայ են. աղզը
երբէք չի գտնուիր փրկելու հոնգամանքներու
մէջ երբ յեղափոխութիւնը նոր սկսած էր մեր
մէջ: Սան-Սթէֆանօի ու Պերլինի դաշնագիր-
ներէն ի վեր զանազան կերպարանքներ ստա-

ցաւ Հայկական հարցը ու մեր վիճակը միշտ
անորոշ ու ա՛լ աւելի վատթարացոյն է այսօր:
Պէ՞տք է շարունակել միշտ միեւնոյն ուղղու-
թեան մէջ. ահա այս հարցումն է որ շատ մը
չուրթերու վրայ կը գտնուի այսօր, ու նկա-
տելով որ մեր յեղափոխական կուսակցութիւն-
ները բնաւ հակամէտ չեն ո՛չ իրենց ուղղու-
թիւնը փոխելու և ո՛չ ալ տեղի տալու, աղզը
ինք իր ձեռքով պիտի տեսնէ իր դատաստանը:
Հոսանք մըն է որ յառաջ եկած է ազգին նորա-
նոր աղէտներուն ու պէտքերուն առջև. այն
մարմինը, որ պէտք է Ազգային Յեղափոխա-
կան մարմինը ըլլայ և որուն պէտք ունինք,
ինքնին յառաջ պիտի գայ ու պիտի կազմուի
հաստատուն հիմքերու վրայ գրուած և պիտի
«գործէ համապատասխան բուն ազգային բազ-
մադիմի պէտքերուն ու շահերուն», և հոն
պիտի երթան ազգային դրօշին տակ միանալ
բոլոր անկեղծ յեղափոխականները, ու այդ
օրէն մեր դատին և յեղափոխութեան պատ-
մութեան համար նոր ու որոշ թուական մը
բացուած պիտի ըլլայ: Մաղթենք որ Հայկա-
կան այդ նոր Արշալոյսին թուականը մօտա-
լուտ ըլլայ:

* * *

ԱԶԳԱՅԻՆ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՄԵՐ ԳՈԾԻՉՆԵՐԸ

Անշուշտ կը կարգան մեր յարգելի գոր-
ծիչները՝ ահուհի կոտորածներու զոյժը, կը
տեսնեն տարաբախտ հայերու արդի սոսկալի
և վտանգաւոր կացութիւնը. ի հարկէ մեզի
հետ համոզուած ըլլալու են թէ՛ իրերու այս
կործանարար դրութիւնը եթէ շարունակուի
Զ-Յ տարիներ ևս, անկասկած արտաբանմանի
հայերս միայն պիտի մնանք իբր նմոյշ հա-
յութեան: Մեր ժ է ն է ը ալ գործիչները ան-
շուշտ նկատի առած են եւրոպական շահագէտ
լիբը քաղաքականութիւնը, որ ակաճիւնը
խուլ, աչքերը կոյր ձեռքով չուղեր լսել
մեր ողբի ու աղաղակի ձայնը. չուղեր տեսնել
անտէրունջ ժողովրդի մը արեանց մէջ լոյլը:
Եթէ ո՛չ մարդասիրութեան, գէթ յանուն քը-
րիստոնէութեան—եթէ երբէք գոյութիւն ունի
—խղճահարելով՝ ո՛չ միայն օգնութեան փրկ-
կարար ձեռք մը կարկառել չուղեր մեզ, այլ
ընդհակառակը Պիղատոսի նման ձեռքերը լը-
ւացած, յանձնած է մեզ կատաղի շնեղէն
աւելի ստորին, աւելի վայրագ, դիշատիչ ամ-
բոխի մը—եթէ կարելի է կառավարութիւն
անուանել—և ձեռքերը վեր բարձրացուցած
«ի խաչ հան զգա» կը գոչէ:

Մեր դժբաղդութեանց ո՞ր մէկը թուենք
հոս. մէկ կողմէն մեր յաւիտենական թշնամ-
ւոյն ի գործ դրած հալածանքը, միւս կողմէն
ընդհ. բրիտանիութեան պաշտպան հանդի-
սացող եւրոպացի պետութեանց անտարբերու-
թիւնը. մեր ներքին թշնամիներու մղած հա-
կահայկան պայքարը, մեր տնտեսական անկ-
եալ վիճակը: Կարծես այս ամենը բաւական
չէին մեզ, Հայ Յեղափոխութեան զեկը ըս-
տանձնող մեր մեծայարգ գործիչ ժ է ն է ը ալ-
ներն ալ յամառութեամբ կը շարունակեն դեռ
իրենց անհամաձայնութեան ազգակործան ըն-
թացքը:

Հետաքրքիր էինք զիտնալ թէ՛ յեղափո-

խական կուսակցութիւնները այս գրութեամբ
եթէ տառնեակ տարիներ ալ շարունակեն
գործը, ինչ կը յուսան շահիլ այս պայման-
ներով: Երբ չունին նիւթական ոյժ, չեն վա-
յելեր հայ ժողովրդի մեծամասնութեան հա-
մակրութիւնն ու վստահութիւնը, ապստամ-
բութիւնը ինչո՞վ և որոնցմով պիտի ընեն:

Մենք՝ ամբողջ Հինգ տարիներէ ի վեր Մի-
ութիւն, Միութիւն գոչելով խնդրեցինք, ա-
ղաչեցինք և պաղատեցինք. ո՞վ լսեց մեր և
ժողովրդի ձայնը. ինչ արդիւնք ունեցաւ մեր
պրօբականտը, «ձայն բարբառոյ յանապատի»:

Ընթերցողը իրաւունք ունի հարցնել մեզ
թէ՛ «ինչ նշանակութիւն կրնայ ունենալ Մի-
ութիւնը կամ Համերաշխութիւնը, երբ լստ
ձեր խոստովանութեան քաղաքական հանգա-
մանքները չեն նպաստեր մեր դատին»: Այո՛,
կըմբռնենք. յանուն յեղափոխութեան հաղա-
բաւոր զոհի տուինք. աղատագրուած ազգե-
րու պէս՝ կախաղանի վրայ, քսորավայրերու
մութ ու խոնաւ բանտերու անկիւնները բազ-
մաթիւ հերոսներ զոհեցինք. նիւթական ահա-
գին կորուստներ տուինք, այսու հանդերձ
քաղաքական ձախող հանգամանքներ՝ այս
անտանկի կացութեան մէջ ձգեցին մեզ: Ին-
չո՞ւ արդեօք այս անյաջողութիւնը, պատաս-
խանք. —որովհետեւ մեր զեկավար գործիչ-
ներու ձգտումներն՝ աւելի իրենց եսականու-
թիւնն ու փառամոլութիւնը կը յարաբերէին,
բան ազգ. աղատագրութիւնը Անոնց կան-
խահաս մասնակի շարժումներ: Խնամ. ոյն
բ է օ՝ մը ընել վախցնելու ու անկիւն մը քաշ-
ուելով, մեր հազարաւոր քաջերը ջարդել տալէն
զատ ուրիշ արդիւնք մը չունեցան: Անոնց բո-
լոր ջանքերն իրենց պատկանած կուսակցու-
թեան գոյութիւնը պահպանելն եղած է, օրի-
նակները դեռ շատ թարմ են. Պապ Ալիի և
Պանքի ցոյսերը, որոնք առաջին հարուածը
տուին Հայ Յեղափոխութեան, երկրորդը՝ Լոն-
տոնի դատարաններու առջև կուսակցական
վատահամբաւ դատավարութիւնը, ուրիշ բան
չէր նշանակիր, եթէ ոչ ազգին և Հայ Յեղա-
փոխութեան բարոյական անկումը:

Անոնց միջև ցայս վայր տիրած անհամա-
ձայնութիւնը՝ տեղի տուած է եղբայրասպան
աղակալոյժ հրապարակային կռուի մը, որուն
բոլոր մանրամասնութեանց թշնամին իրազէկ
ընելով, անուղղակի կերպով նպաստած են
նոյն իսկ այսօրեայ պատահած ահուհի կոտո-
րածներու:

Իսկ գալով՝ յանուն յեղափոխութեան մեր
տուած անհամար ջարդերուն, որոնցմէ եթէ
կը յուսայինք եւրոպական անխիղճ քաղաքա-
կանութեան ուշադրութիւնը մեր վրայ հրաւի-
րել, փորձերը պարզապէս ապացուցին որ
չարաչար սխալուած ենք. քանի որ մենք կազ-
մակերպեալ զօրաւոր այժ մը չկրցինք ներկա-
յացնել. մեր կռիւներու մէջ ամենափոքր
լուրջ գործունէութիւն մը կամ աննշան յաղ-
թանակ մը չունեցանք, այլ անշուշտ առանց
զիմադրելու ոչխարներու պէս մորթուելով,
հազիւ կրցինք անոնց ըսել տալ. «խեղճ ազգ,
խեղճ ժողովուրդ, մեզք, հազար մեզք. ան-
խնայ կը ջարդուին»: Այսպէս օտարազգեաց
մարդասէր դատակարգի զթութեանն ու ողոր-
մութեանը միայն արժանացանք:

Ահա ասոնք եղած են քաղաքական հան-
գամանքներու մեր դատին աննպաստ ըլլալու
բուն պատճառները:

Երբ Հայ Յեղափոխութիւնը ներքին ոյժ
գոյացուցած ըլլար, կազմակերպեալ մի բա-

ՀԱՅԿԱԿԱՆ ՎԵՐՋԻՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ

ՈՃՐԱԳՈՐԾ ՍՈՒԼԹԱՆԻ յոբելեան տօնե-
րու նախնթաց օրերուն մէջ աեղի ունեցած
Սպահանքի սոսկալի կոտորածին առթիւ,
ընդհ. քրիստոնէութեան պաշտպան Պեժ
Պետութիւններու առաջարկութեամբ՝ թիւրք
կառավարութիւնը քննէլ յանձնախումբ մը
ղրկած է կոտորածի վայրը, ուր տակաւին չի
հասած այդ պաշտօնական առաքելութիւնը,
եւրոպական նշանաւոր թերթերու Կ. Պոլսոյ
թղթակիցները՝ հաւաստի աղբիւրներէ քաղած
կոտորածներու հետեւեալ տխուր լուրերը հե-
ռագրաւ կը հաղորդեն իրենց թերթերուն:

«Տիգրանակերտի շրջակայ ութը հայ գե-
ղերու բնակիչները՝ թուրք ամբոխէ մը յար-
ձակում կրելով, բացի չափահաս մարդերէ կա-
նայր և տղայք ալ անխտիր ջարդուած և իրենց
սաացուածքը յափշտակուած է: Վայրենի ամ-
բոխը կայսերական կանոնաւոր զօրքերու գոր-
ծակցութեամբ աւառութիւններէ յետոյ չըր-
ձիգութեամբ հայերու տները մախիւր դարձու-
ցած է:»

Աթէնքի Օսմ. դեսպանատունը՝ Սպա-
հանքի կոտորածին լուրը հերքելէն յետոյ այս
անգամ ալ տեղական թերթերու մէջ թէև
պաշտօնապէս հերքեց, սակայն նենգամիտ
Սուլթանի արտասահմանեան ստոր ներկայա-
ցուցիչներու սովորական գործն է այդ:

Տիգրանակերտի կոտորածէն յետոյ գրեթէ
8-10 օր չանցաւ, հոկտ. 18 թուականաւ հե-
ռագիր մը կը գուծէ Վանի և Մուշի նահանգ-
ներուն մէջ պատահած նոր կոտորածներու
լուրը, որուն մանրամասնութիւնը թէև չի
յիշեր հեռագիրը, սակայն նոյն թուականով
երկրորդ հեռագիր մը կը հաստատէ այս վերջի
կոտորածներու իրականութիւնը, զոր մինչև
այսօր գեռ հերքած չէ դժոխագիտ Սուլթանի
Աթէնքի ներկայացուցիչը:

Կ Ո Տ Ո Ր Ա Ծ Ն Ե Ր Է Ն Վ Ե Ր Զ

Քուրդերը Մուշի և Վանի հայ գիւղերը
մտնելով, պատմութեանց մէջ չի յիշուած և
մինչև հիմա նմանը չի տեսնուած վայրագու-
թիւններ ի գործ դրած են: Մանրամասնու-
թիւնները—կ'ըսէ թղթակիցը—այնքան աղե-
կուոր և սրաւաճիկ են, որ գրիչն անգամ կը
դժկամակի սահիլ ու նկարագրել այս կարգի
եղեւնադործութիւններ, որ կը պատահին լու-
սաւորեալ դարուս մէջ: Դիւղացիներու եղնե-
րը, ոչխարները հատ մը չի թողելու պայմա-
նով քշած տարած են. տներու գոյգերը, ու-
տեսները և այլ իրեղէնները ամբողջովին
յափշտակած են, այնպէս որ խեղճ մարդերը
չորս կիսաւեր պատերու մէջ գետնախտի չո-
րարեկ հացի կարօտ մնացած են: Բաղմաթիւ
հայ գիւղացիներ մանաւանդ տղամարդեր ու
երախաններ նոթութենէ մեռած են: Մուշի
Առաջնորդը ընդարձակ տեղեկագիր մը զրկած
է Հայոց Պատրիարքարանը, յորմէ անմիջա-
կան օգնութիւն խնդրած է. Առաջնորդը տե-
ղեկագրին մէջ կը յիշէ թէ՛ գիւղերու մէջ ո'չ
չափահաս, ո'չ անչափահաս աղջիկ մը զերծ
մնաց վայրենի օրտուին բռնաբարուէն. հարս,
աղջիկ եկեղեցւոյ շրջափակին մէջ համախմ-
բուած Առաջնորդի ներկայութեան լալով,

ողբալով բարձրաձայն կ'աղաղակեն՝ «աւելի
լաւ է ընդհ. կոտորած մը միանգամէն բոլո-
րիս կեանքին վերջ տայ, քան թէ այս ան-
վերջանալի հալածանքներուն առկա մարտիրոս-
ներու պէս պարբերաբար նահատակուինք:»
Տեսնենք թէ ի՞նչ պիտի ընէ մեր Օրմանի խող
պատրիարքը:

ԼԵԻՈՆ ԼՈՒՍԻՆԵԱՆԻ ՍՊԱՆՈՒԹԻԻՆԸ

Վահէ Հայկաղնեան, երբեմն Վահէ Շա-
ւարչեանի՝ որ գործում էր «Հնչակ» կուսակ-
ցութեան մէջ, նենգամտութեամբ սպաննուե-
ցաւ ապրիլ 21ին թ. քաղաքում:

Այդ սպանութեան գաղտնիքը որքան մուծ
և անորոշ՝ նոյնքան աննպաստ լինելով մեռնող
յեղափոխականի պատուոյն, նրա յիշատակին,
յանուն արգար նախանձախնդրութեան ցան-
կալի է հասկնալ թէ՛ արդեօք ի՞նչ յանձանքի
փոխարէն երբեմն յեղափոխական գործիչի դեր
ստանձնող անձնուէր երիտասարդի մը տ է՝
և օրի կենթարկէ կուսակցութիւն մը և այն
ալ առանց մէկ հարցաքննութեան, և կամ մէկ
նախանձոտ ընկեր մը գաղտագողի կը սպաննէ
իր ընկերին:

Սոյն երկտողը աղնիւ կոչ մըն է բոլոր
հայ յեղափոխական կուսակցութիւնների, որ-
պէսզի անմիջապէս հաճին քննել այս ոճրի
գաղտնիքը համերաշխ թ. քաղաքում, որով մի-
այն կը յուսամ թէ վերջ գտնեն յեղափոխա-
կանի պատուի արատ բերող նենգաւոր սպա-
նութիւնները և կամ թիւրիմաց ենթադրու-
թիւնները:

Մայր-Արաքս

Թիֆլիս, 1

Սեպտ. 1900

L' Avenir

1896 թուականին Տաքէս անուն հայ մը,
որ արտասահմանի թուրք հիւպատոսարաննե-
րու մէջ պաշտօն վարած է, երբ պաշտօնանկ
կընեն զինքը, իբր սպառնալիք նոյն ժամա-
նակին կը ձեռնարկէ Թրիքստի մէջ գաղղ.
թերթի մը հրատարակութեան, որուն տառա-
թիւը ի լոյս ընծայելով, դեռ պահատնէն կը-
րիկ դուստր մը կը սաանայ և կը դադրեցնէ
թերթը. կերեւի թէ ստացած դրամին սպա-
ռումը հարկադրած էր զինքը փոխադրուիլ
Աթէնք, ուր սկսաւ L'Avenir գաղղ. թեր-
թի հրատարակութեան: Շարունակեց 3-4
ամիս և արտասահմանի մեր հայրենակիցներէն
ալ իբր բաժնեգին բաւական դրամ չորթեց ու
դարձեալ տեղւոյն դեսպանատնէն մաս մը դը-
րամ ստանալով անյայտ եղաւ:

Այս այն հանրածանօթ խաչագողն է,
որ ասկէ իբր երկու տարի առաջ Անկիւ-Արմէ-
նիան քովիցի կողմէն զրկուած հագուստ-
ները, որոնք տեղւոյ պապոտանող չքաւոր հա-
յերու պիտի բաժնուէր, բայց Տաքէս ան-
խղճօրէն իրեն գիմող կարօտեալները վաճառ-
ելով հագուստները կը վաճառէ ու դրամը կը
զրպանէ և առաւ փախաւ անցադրող կ'անե-
րեութեանայ:

«Միութիւն» ժամանակին հրատարակած
է բոլոր մանրամասնութիւնները:

Այս հին լուրը վերստին հրատարակել-
նուս պատճառը օրիպայէն և այլ տեղերէ
տեղեկութիւն խնդրած են մեզմէ այս անձին
մասին, որոնց իբր պատասխան կը հրատա-
րակենք:

նակ պատրաստած ըլլար, պատերազմի դաշտին
վրայ մեր շուրջը պիտի տեսնէինք ազատասէր
իտալացի, Գաղղիացի և թերեւ Հելլենացի
զինակից կամաւորներու լէ գ է ո ններ, որոնք
ձեռք ձեռքի տուած՝ հերոսաբար պիտի կռուէին
Հայաստանի ազատութեան համար: Միևնոյն
ատեն դրամի զօրութեամբ կաշառուած պիտի
ըլլային մեզմէ բուրդ աչիւրէ թներ, անօթի
թուրք բէ կիր, որոնք ուղղակի կամ անուղղո-
կի գործիչներ պիտի ըլլային մեզ:

Ընթերցողը՝ թերեւ մեր այս դժած տո-
ղերը յոկ երեակայութիւններ նկատէ, բայց
աւաղ, մեր աշխարհէն հեռացած է երջան-
կայիշատակ Տիգրան երկաթը, որ իբր յայտնի
վկայ կարող էր հաւատացնել զձեզ երեակա-
յութիւն ու իրականութիւն ըլլալը:

Այս պայմաններով եթէ մինչև հիմա ջար-
դուած հայերու մէկ ութերորդ մասը զոհած
ըլլայինք, պիտի տեսնէինք որ Պետութիւնները
ն ստիւլով Արեւելի մէջ իրենց չահերու վը-
աանդումը, ակամայ միջամտած ու մենք ալ
մեր ազատութեան դրօշը ծածանած պիտի
ըլլայինք:

Մեր այս դժբաղդութեան և անյաջողու-
թեան բոլոր պատճառները աներկբայօրէն կը
վերադրենք մեր արտասահմանեան գործիչնե-
րուն, որոնք միլիոնաւոր ժողովրդի մը ճակա-
տագիրը իրենց մատերուն վրայ խաղալի
դարձուցած՝ բացարձակապէս անոնց կեանքին
հետ կը խաղան: Մայր-երկրին մէջ յեղափո-
խական տարրը վտարած է իր մէջէն կուսակ-
ցական խտրութիւնը, անիկայ անուան համար
չէ, փառքի համար չէ որ գործել կուզէ. այլ
Հայրենիքի փրկութեան Սուրբ Գաղափարին
հետեւելով կը գործէ: Ինչո՞ւ ուրեմն մեր հրա-
մանատար ջոկերը աղբային ներկայ ճգնաժա-
մին մէջ իրարմէ վիճանելով որ և է միջոցով
մը հաշտութիւն չեն կնքեր մեր վերքերու ըս-
պելանի ըլլալու համար:

Ալ բաւական է, վերջապէս դանակը ոս-
կորին հասաւ. կեանքը անսանելի դարձաւ.
մեր առջև բացուած է ահապին բառս մը, ուր
կը դահաւիթիք կայծակի արագութեամբ, ալ
ժամանակն է որ հայ ժողովուրդը սթափի,
եթէ ոչ իր պատին ու ստացուածքը. գէթ իր
կեանքը փրկելու համար միահամուռ ձայն մը
բարձրացնէ մեր գործիչներու ականջին և ըսէ.
«կամ ձեր պառաւական կռիւներուն վերջ մը
տուէք, կամ թողէք մեր օձիքը. բաւական է
որքան ձանձրացուցիք մեզ»:

Մեր գործիչները եթէ շարունակեն ան-
զորդուելի մնալ իրենց յամառ ընթացքին մէջ,
այն առն ուրիշ բան չի մնար ընել մեզ, եթէ
ոչ փակել մեր կարգացած վայնասուններու
Այսմաուրքը և ձեռք առնել ուրիշ գործնա-
կան միջոցներ: Թէ՛ որոնք են այդ միջոցնե-
րը, այժմէն պարզելու հարկը չենք տեսներ,
կ'սպասենք առաջարկուած «Հոմագումար ժո-
ղովրդի իրականացման», երբ բոլորովին յուսա-
հատինք, այն օրէն հրապարակաւ կ'սկսինք
մենք ալ մեր գործը շարունակել, գործ մը, որ
բոլոր կուսակցութեանց հաճելի չպիտի թուի:

* * * Ամերիկայ հրատարակող «Հայրենիք»
թերթը Ուատրէն Պոսպոն փոխադրուած է: Նոր
հասցէն է

Hayrenik Publ. Co 86 Essex str
Boston Mass, U.S.A



Յ Ի Շ Ա Տ Ա Կ Զ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի

Մեր բարեկամներէն Լուսանկարիչ պ. Զ. ԱՉԱՏԵԱՆ, յառաջիկայ նոր-տարւոյ առթիւ խնամբով պատրաստած է վերը զե-

տեղումս «ՆՇԱՆԱԿԻ ԶԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ» նը-կարով «բառի բոս-թալ» ներ: Փոսթայի ծախքով հատը 5 սան-թիւ, մեծ քանակու-թեամբ գնողներու ո(օ 20 գիւշ կը լինի:

Սոյն գործը իր տեսակով առաջինն ու-րութիւնը ըլլալով հա-յերուս մէջ, կա-րելոր ցուցադրու-թիւն մը պիտի հա-մարուի օտար նամա-կատանց մէջ:

Յանկայողք թող զիմեն առ պ. Զ. Աչատեանի, Աթէնք, փոսթ ոչս-թանի:

գասակարգին քաջաբեղ սոյն օգտակար հրա-տարակութիւնը:

ԲՍԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Տրին. 6ամս. 3ամս. 1թիւ
Ամերիկա . . . 3 Տալ. 2 Տալ. 1 1(2 30 սնտ.
Ռուսաստան . 6 Ռալ. 4 Ռալ. 2 2(2 80 կպ.
Թուրք. Եւրոպ.
Եգիպտոս. ալ կրկ 15 Յր. 8 Յր. 4 1(2 1 1(2 Յ.
Հասցէն է՝

M. F. VALDER

Rédaction du «Handès», Genève (Suisse)

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՔՍՐՈՋ ՄԸ

19րդ դարու Ամերիկայի Վոլթերը, պր. ինկրսօլ՝ որ մինչև գերեզմանի դուռը հաւա-տարիմ մնացած է իր անհաւատութեան դա-զափարին. այս «Քարոզով կըսէ թէ մարդիկ փոխանակ եկեղեցիին, չնորհակալ ըլլալու են հանճարին և գիտութեան, որ մասնագիտա-կան արհեստներով մեծամեծ գիւտեր լրին, որոնցմէ մարդիկ կ'օգտուին այժմ (այս «Քա-րոզը հայերէնի թարգմանուելով ամիսփուշած է 56 երեսէ բաղկացեալ ատարակի մը մէջ, ո-րուն գինն է 15 սենթ (75 սանթիմ) ցանկա-ցողները պէտք է զիմեն թարգմանչին հետե-նալ հասցէին:

Y. Iknadiossian 86 Essex Str.
Boston mass u. s. a.

Ա. Զ. Դ.

Քղիի Օրօր գիւղի աղգայիններէն Տիար Մարտիրոս Շանսեանի որդի պ. Կարապետ Շանսեան 26 ամե յ երիտասարդը, հայաշինջ դէպքերէն ի վեր անհետացած է և իր գահի-րէաբնակ աղգականները կ'ուզեն գիտնալ թէ՝ սէր կը գտնուի այդ երիտասարդը:

Կը խնդրուի ուրեմն մեր պատ. Աղգային-ներէն որ եթէ գիտեն յիշեալ երիտասարդին ուր գտնուիլը կամ եթէ անդեկութիւն ունին անոր մասին, բարեհաճին ծանուցանել «Ար-շալոյս» Տնօրինութեան ի Գահիրէ:

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԲ

Տփլիսի մօտ Ղրանկալի ըոռած կայա-րանէն քիչ հեռու, երկաթուղոյ կառախում-բերու բաղխում մը պատահելով 17 մարդ մե-ռած և 60 մարդ ալ ծանրապէս վիրաւորուած են: Առ այս Տփլիսի և Բաղուի միջև կառա-խըմբի երթեկութիւնը երկու օր դադար է:

* * Ս. Բէթրպուրէն Հոյտ. 26 թուակա-նա. կը հեռագրեն թէ Ռուսականակաւ սահ-մանպիւնն անհանգարտութիւն պատճառով լուրեր կը հասնին: Չարի կառավարութիւնը հրամայած է սահմանադիւրի ամբողջութիւնը ջորացնել և ոյժերը բազմապատկել: Այս յան-կարծակի պատրաստութեանց պատճառները անյայտ կը մնան:

* * Կ'երեկ թէ Համիտը իբր քաղաքա-կերթ աղբի մը կայսրը նախատիք համարած է Եւրոպացոց դէպի Չինաստան արշաւանքին շմասնա ցիւղ, ինչպէս կը գրէ Կ. Պոլսոյ անգղիաձայն թերթ մը: Սուլթանը իր բարե-կամ վիլէյէթին հեռագիր մը տալով բաղձնոր-յայտնիւր է քանի մը հազար թուրք ջորքի Բէթլին զրկել: Չգիտցուի թէ ոճրագործին մտերիմը ինչ պատասխանած է:

* * Բարիդի եղեռնադատ ատեանը, Պար-սից Շահին դէմ սպանութեան փորձ ընող պ. Սալտան անխնայապէս ցկեանս չղթայական աշխատութեան դատապարտել է: Պ. Սալտան դատարանի նախագահին հարցման պատաս-խանելով խոստովանել է անխնայական ըլ-լալը և թէ ժողովուրդը ճշտը բռնապետա-կան ընթիւմին ստակալի հակառակորդ մը ըլլալը:

Մեր յարգելի այն ընթերցողները, որոնք մեզ հետ հալիւ ունին, եթէ կը բաղձան «Մի-ուլթիւն» շոյութիւնը պահպանել, կը խնդրենք որ փութան իրենց գրաւորը զրկել խմբա-գրութեան:

ԽՍԲԱԳՐ: ԻԹԻԻՆ «ՄԻՈՒԹԻՆ» Ն Ե

Գալով վերակազմ. Հնչ. կուսակցութեան կեդրոնին՝ որ Լ. Ֆրանք ստորագրութեամբ հետեւեալ պատասխանը գրած է Տիար Բաս-մաշեանի. «Դաշնակցական կուսակցութիւնը իր կամքին բացարձակ տիրապետութիւնը կը դաւա՛ր և ուրիշ յեղափոխական մարմին-ներու ներքին կազմակերպութեանց միջամե-տելու յաւակնութիւնը ունի, այսպիսի կա-ցութեան մէջ անօգուտ է համարինք մինչև իսկ նկատողութեան առնել ձեր առաջարկը»: Ընթերցողը ինչ կը հասկնայ այս պատճառա-բանութենէն. միթէ՞ Դաշնակցութիւնը ինքն է որ այս ժողովի գումարման նախաձեռնակ ե-ղած է, և ինչ առնչութիւն կ'ընայ ունենալ ժողովի գումարման հետ. անոր՝ իր կամքին բացարձակ տիրապետութիւնը դաւանիլը: Արդէն ժողովի գումարման նպատակը ինչ է. այս թերութիւնները բաւաւու համար չէ՞. մանաւանդ որ միջամտող ոչ թէ Դաշնակցու-թիւնն է, այլ Համազումար ժողովը պիտի ըլ-լայ: Պ. Լ. Ֆրանք իր պատասխանով եթէ հասկցնել կ'ուզէ թէ Դաշնակցութիւնը իբր կազմակերպեալ մարմին չի ճանչնար դիրքը, կը սխալի. եթէ այդպէս լինէր, Դաշնակցու-թիւնն ալ կարող էր պատասխանել թէ՛ և որովհետեւ վերակազմ. Հնչ. կուսակցութիւնը իբր յեղափոխական մարմին չենք ճանչնար, հետեւապէս ձեր առաջարկը նկատի առնել բո-լորովին աւելորդ կը համարինք, ընդհակա-ռակը պատ. «ԼՍ.Ումէնի» ի առաջին հրաւիրին փութաց պատասխանել:

Վերջապէս կատակերգութիւն մը, աչքա-կապուկի խաղ մըն է այդ որ կը խաղցուի հայ ժողովրդի գլխին: Կը տեսնեն կուսակցութիւն-ները իրենց օւկան թերթերու մէջ Միութեան գաղափարի խոյեանները կը ներկայանան, երբ կարող կուգայ գործնականին, իւրաքան-չիւրը մէկ մէկ ծակ կը մտնեն: Կ'յա ալ աղուէ-սական վարպետութիւն մը չէ՞, ուրեմն կեցցէ Արփիար Արփիարեան:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Հ Ա Ն Դ Ե Ս

ՍՕՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՕՐԳԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ—ՔԱՂԱՔԱԿԱՆ—ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ա մ ս ա գ ի ը

Սոյն հանդէսը՝ հիմնուած է Ժընէվի մէջ. իւրաքանչիւր թիւը կը բաղկանայ 64 երես-ներէ, որուն երկու թիւերը շնորհակալու-թեամբ ստացած ենք:

Հանդէսը՝ մասնաւորապէս Սօցիալիտա-կան գաղափարին նուիրուած, հայութեան մէջ իտէալական նոր շարժում մը առաջ բերելու պիտի ձգտի: Աղգային ներկայ ճգնաժամին մէջ թերեւս զժողովրդեանց հանդիպելով առ այժմ չի կարողանայ յուսացուածին չափ ար-գիւնաբեր ըլլալ, սակայն ապագային կրնայ մին յոյսեր տալ մեզ: Ի որտէ յաջողութիւն և յարատեւութիւն մալթելով՝ կը յանձնար լինը մեր ժողովրդի լուսավոր և առողջ իմաստ

Դ Ի Տ Ո Ղ Ո Ւ Թ Ի Ն Մ Ը

Մեր անցեալ թուով խոստացած էինք Հա-մագումար ժողովոյ առթիւ, Տիար Մ. Փոր-թուգայեանի և վերակազմեալ Հնչ. կուսակ-ցութեան կեդրոնի բացասական պատասխան-ներու մասին մեր կարծիքը յայտնել:

Տիար Մ. Փորթուգայեան, հին գործիչ մըն է, որուն առաջին մատուցած ծառա-յութիւնները անուրանալի են, թէև շատեր՝ անոր մասին չարամտութեամբ աննպաստ խօ-սելով տարածայնած էին, որպէս թէ աղէն մեծամեծ գումարներ կ'որդելով կարեւոր գիրք մը չինած է Մարտիլի մէջ, մինչդեռ իր այս օրեայ նիւթական անձուկ վիճակը հաստա-ապէս կ'ապացուցանէ իր անմեղութիւնը: Սակայն եթէ մեզ դարմացնող կէտ մը կայ, այն է թէ՛ պ. Փորթուգայեան ինչ պատճառներ կրնար ունենալ պ. Մինաս Չերազի հրաւերին մ' տարօրինակ սառնութեամբ պատասխանել թէ՛ «Ես իմ մասնաւոր համոզումներս սննիմ, և թէ ժամանակին յայտնած եմ իմ կարծիքս. ուստի այժմ լռութիւն՝ կը պահեմ»:

Մենք այսօրինակ պատասխան մը՝ չիտակը չէինք ակնկալել իրմէ, պատասխան մը, որ 15-16 երկար տարիներու ընթացքին մէջ աղ-գային հիմնական ոյժ մը գոյացնելու ձգտում-ներն ունեցող հայրենասէր անձի մը երբէք ներքի չէ: Ինք իր բամբուլները դարձեալ թող ունենար. սրվհետեւ ժամանակին իր յայտնած կարծիքներու անխրադործելի մնալը տեսնելով՝ պէ՛տք էր յուսահատիլ սւ այժմ լռութիւն պահել:

Գաղափար մը յղանալը կարծիքներ յայտ-նելն սւ ծրագրերներ կազմելը շատ դիւրին է, բայց գործադրելը չափազանց դժուար, յայտ-նուած կարծիք մը՝ երկինքէն իջած պատգամ մը չէ որ անպատճառ ժողովրդին ընդունել տալու յաւակնոտութիւնը ունենանք: Անհատի մը ձայնը. ի հարկէ չէ կարելի այնքան լսելի ըլլալ, որքան մէկէ աւելի անձերէ բաղկաց-եալ ժողովի մը: Ահա ճիշդ ասոր համար է որ կը պնդենք մենք թէ՛ մեր ներկայ աղէտներու մասին գեթ խորհրդակցելու համար արտա-սահմանի մէջ Աղգ. ժողովի մը գումարման պէտքը միշտ կարեւոր և անհրաժեշտ է, Խորեմն սիրելի էր մեզ յուսալ, որ Տիար Փոր-թուգայեան եթէ կուսակցական նկատումնե-լով պաշարուած չէ, աշխատէր ամեն ջանք ի գործ դնել ի նպաստ համագումար ժողովի իրական սյման:

* * *